

ՀԱՅ - ՎԵՆԵՏ

Բ. ՊԱՐԱԳԱՅ

Ա. Գիրք Յիշատակարանաց վեհեմոկոյ տերութեան — Հայք ի վեհեմոկ ի ԺԴ
— ԺԶ դարս — Նաւարկող և Նաւատեր Հայք. — Հայք Ղրիմոս. —
խնդիր գաղթականութեան Հայոց ի կրետէ :



ՎԵՆԵՏԿՈՅ անցեալ Հասարակապետութեան անուպառ Դիւանաց
մէջ՝ գլխաւոր և փառաւոր հաւաքմանց մէկն է 30 մեծ հասոր
Յիշատակարանաց, այլեւայլ ազգաց և պետութեանց հետ յա-
րաբերութեանց, դաշնակցութեանց, և պէսպէս խնդրոց և կար-
գաւորութեանց անոնց և իրեն նկատմամբ : Շատ ցանկալի և խնդալի է այն
ազգայնոց՝ որոց նախնիքն ունեցեր են այսպիսի հազարակցութիւններ, փնտռել և
տեսնել իրենց հայրենի յիշատակները ԺԲ դարէն սկսեալ : Այսպիսի բազմ և
խնդութիւն եղած է և մեր ազգայնոց. և արդէն տեսանք ԺԳ և ԺԴ դարուց
մէջ Հայոց և վեհեմոկոյ յարաբերութիւնները, զոր և Ա Պարագայ անուանե-
ցինք ըստ կարգի ժամանակին : Շատ աւելի ծանօթութիւններ պիտի ունե-
նայինք, եթէ դժբաղդարար այդ պատուական հասորոց հնազոյնքն 12 կամ 13
կրակի ճարակ եղած չըլլային, մանաւանդ որ անոնց մէջ կը գտուէին յիշատակք
մեր Ռուբինեանց Հարստութեան, և որոց ոմանց պարզ ցանկի պէս տողաշափ
ակնարկութիւն մի մնայ. որ՝ սակայն կերպով մի կորստածին յայտարար ըլլալով՝
միշտ պատուական է և գիւտ մի համարելի : Մեծագոյն դժբաղդութիւնն է՝ երբ
յիշատակաց նշան մ'ալ չերեւիր : Այդ հատորներուն այլեւայլ երեսաց վերնա-
գիբը՝ զանազան պետութեանց անունները կը կրեն, որոց վերաբերեալքն ալ
նշանակուած են նոյն երեսաց մէջ. այդ վերնագրաց մէկն ալ է Armenia :
Ի՛նչ եռանդեամբ և յօժարութեամբ կը դարձնէ Հայ բանասէրն այն մագաղաթները
և թուղթերը, և կը հետազօտէ իր նախնեաց (զոնէ մէկ ցեղին կամ իշխանու-
թեան) յիշատակները, աւելորդ է բացատրել. բայց չեմ գիտեր՝ ուրախալի՞ն
աւելի է եթէ տխրալին, երբ հետզհետէ շրջելով թուղթերը, կը տեսնես քու
ազգանունդ ի վերնագրին, բայց ներքեւը տեղեկութիւնք կը նուազին, իբր հատ
ու կտոր կը նշմարուին... կարծես թէ յիշատակքն ժամանակին ալեաց վրայ շուտ
շուտ սահող նաւու մէջ ծածկուած՝ երթալով կը հեռանան : Քանի մի թուղթ ալ

շրջէ, ազգիդ միայն վերնագիր անունն կայ . թղթին երեսն անգիր անգիծ դատարկ մնայ . շրջէ՛ քանի մի թուղթ ալ , և ոչ վերնագիր կ'երեւի . Armenia անուն չկայ . . . Նաւն բոլորովին հեռացեր ծածկուեր է հորիզոնէն անդին . փնտռածդ՝ մոռացութեան կամ չեղութեան անպնդոց մէջ է . . . Դասուրբ երն այն Ալլիսիան կան ծովածոցէն և փոքր Ասիոյ հարաւային արեւելեան մէկ քեզի ծանօթ ծովածոցէն՝ իրարու դիմող ողջունարեր և արդասաբեր նաւերն . մանաւանդ թէ դեռ երբեմն անկէջ կու գայ քանի մի նաւ , բայց անոնց դիմաւորող չկայ , և ոչ ձեռն ի ձեռն Հայ-Վենետ :

Պատմութիւնն կամ պէտք ազգաց՝ շատ դարմանալի և խրատելի օրինակներ կամ տեսարաններ ցուցած են և կը ցուցնեն , ինչպէս յայտնի է ամենուն . այն ցուցմանց մէջ զարմանալի երեւոյթ մ'ալ էր՝ ԺԳ-ԺԴ դարուց միջոց յիշեալ փոքր Ասիոյ ծովեզերքը կենդանացընող և արեւմտեան ազգաց հետ մանաւանդ իտալացոց և աւելի մանաւանդ Վենետուաց հետ հաղորդակից ազգն և պետութիւնն , որ իրբեւ երկար քերդողական վիպասանութեան մէջ՝ առանձնակ կամ մասնական դրուագ մի է միջինդարեան պատմութեան . իսկ ըսն վիպասանութիւնը երկարատեւ (զի չրեսք մշտատեւ) պետութիւնքն են . որոց մէջ իրբեւ զարմանալի բանաստեղծութիւն մ'էր Վենետիկեան հազարամեայ հասարակապետութիւնն : — Բայց ո՛ր է հիմայ . . . չորս դար յետոյ քան զղիպուած իր Արմէն վաճառակցին՝ ինքն ալ դադրեցաւ . քաղաքականօրէն ինքն ալ թաղուած է իր մշտաշարժ օսկէկոհակ ծովածոցին մէջ . . . Ս . Մարկոսի գոռոզաձայն առիւծու մոնչիւնն այլ չի լսուիր :

Սակայն միայն իշխանութեամբ կամ հրամանատարութեամբ չի վերջնաւոր ազգի մի անուն և փառք . Վենետիկի փառաւոր կեանք մի ունեցաւ , փառաւոր է իր յիշատակն ալ . թող իր դաշնակցին կեանքն և յիշատակն ալ չի մնայ անփառունակ : — Եթէ այն միջինդարեան Հայ-Վենետուաց յիշատակաց նաւն ծածկուած է , նաեւ եթէ խորտակուած է , դեռ խորտակեալ նաւու բեկորներ կրող թափառական ալեաց ոմանք կ'երեւին և ի յետին դարս . ոչ արգարեւ իբր հաւասար մտնութեամբ շղթայաշար կապուած , այլ անհաւասար և անկապ . սակայն դարձեալ կերպով մի բառ ընթացից ժամանակի՝ կրնայ շարունակ ըսուիլ , թէ ոչ Վենետուաց երեւոյթն ի Հայս , այլ Հայոց երեւոյթ է բնակութիւն և եկեղեցի եւա՝ ի Վենետիկ : Այս երեւոյթն աւելի նուազ կամ ցանցաւ է յետ Ա Պարագային , իբրեւ երկու դար (ԺԵ, ԺԶ) , յորում օտարութիւն և անհաստատ տիրապետութեանց բռնաբարութեամբ կը տատանէր մեր և զրացի ազգաց վիճակն . իսկ երբ աւելի կանոնաւոր և մեծագոր տէրութիւնք հաստատուեցան յարեւմտեան Ասիա , մերազգիք ալ սկսան դարձեալ յաճախել ի Վենետիկ , և նոր օրինակ վաճառակցութիւն մի հաստատել . և ասով նոր Պարագայս մ'ալ սկսաւ Հայ-Վենետուաց , զոր Գ կ'անուանեմք . իսկ ասոր և առաջնոյն միջոցն՝ Բ , որ է այն կցկտուր յարաբերութեանց կամ երեւութից Հայոց ընդ Վենետոս , ի վերջոյ ԺԴ դարու մինչեւ ի վերջոյ ԺԶ դարու : Ահա այս Բ Պարագայս միջոց հանդիպած քանի մի երեւոյթներ կը դիտեմ յայտնել յառաջիկայս , որոց արժէքը կրնան դատել ընթերցողք , թերեւ և յարգել մէկ քանին :

Ա. Արդէն յիշեցինք մէկ երկու զկայք կամ Հայ անձինք ի վենետիկ, յետ զպրիւտ Ռուբինեանց պաշնակցութեան, ԺԴ դարուն վերջերք. (տ. Բազմ. Խթ, 100. 102). նոյն դարուն աւելի վերջի տարիները (1395) մեզի ծանօթ եղած է ոմն Անտոն որդի Բարսէի (de Baseo կամ Baseis), որ կարճ կտակ մի բրած է (6 փերք. 1394—5) յորում կ'իմացուի Հայ ըլլալն (De Armenia), այլ ոչ գուտուն կամ քաղաքն. արուեստիւ ալ՝ Նաւաստի (Marinarius). ի վե. նետիկ բնակութեան տեղն է Ս. Մարտիակէս թաղն, որոյ քահանայից մէկն է կտակը զրոյ հօտարն (Joh. Campio). իսկ կինն Մարթա զուարթ թեռնորի ծննդեամբ ի Դուրացցոյ (Durazzo) Ռումելիոյ, և նախ բնակեալ ուրիշ թաղի մէջ: Ասոր կը թողու Անտոն բերած օծիւոր, երեք Լիթայ կրոսից, որոց արժէքը յիշած եմք (Բազմ. Խթ, 421):

Ջարմանք չէ, մանաւանդ թէ բնական իմն է, որ ի վենետիկ՝ նաւարկութեան այն պարուց առաջին քաղաքը բնակող Հայ մի՝ հետեւի անոր ամենին նշանաւոր արուեստին, մեծ կամ փոքր նաւարկութեան. նոյն զարու առջի կիսուն մէջ ալ յիշուին Հայ Նաւապետք՝ Թէ՛ ի Սեւ ծովու և թէ իտալիոյ կղզմբուն ջրոց մէջ. աւելի կը ծանօթանան Հայ-վենետաց Գ. Պարագային մէջ, Թէ՛ նաւապետ և թէ նաւասէր Հայք, և թէ զործաւորք վենետիոյ հռչակաւոր Նաւարանին մէջ. այս սեղուոյս թաղական եկեղեցւոյն (Ս. Պետրոս) դիւանաց մէջ՝ ԺԶ դարուն վերջեր և ԺԷ ին սկիզբները կը յիշուին Եղիա Հայտ մի որդիք, զրեթէ ամէնքն ալ (Գեորգ, Յովնան, Մկրտիչ, Նիկողոս) բանաւորք կամ հրետուք (Marangon) Նաւարանին. իսկ մէկն ալ (Պետրոս) Նաւապետ (Capitan), որ ի Ռալուզա առեր էր կին Ֆրանչեսկոնա անուամբ: Ասոնցմէ առաջ և ժամանակակից է՝ իբրեւ յատուկ մնականուամբ Հայ կոչուած, Անտոն և իր որդին և թոռն, որ զար մի կը յիշուին նաւարանի կամ նաւական զործոց մէջ, և մեծ ճարտարութեան յիշաւ տակներ թողած է, զոր թողումք ի կարգի ժամանակին ծանուցանել. որպէս և ուրիշ նաւապետներ ԺԴ դարուն կիսուն, Capitan կոչուածք (Մկրտիչ Ռուստոն 88 + յամի 1753, Պետրոս Բաշասան, Յակոբ Աքաճան), ետքինս կ'անուանի երբեմն Կալերա նաւու զիսաւոր, Capo di Galera, երբեմն Բաքաձիդ նաւու զիսաւոր, Capitano Bombardier:

Այս այս մեր հիմայ քննելի (Բ) Պարագայիս մէջ Հայոց նաւարկութեան կամ ծովային երթեւեկութեան զիսաւոր տեղ մ'ալ պէտք էր ըլլալ Սեւ ծովու նշանաւոր թերակղզւոյն քաջանշան քաղաքն Կաֆա, որոյ Հայ գաղթականութեան պատաճութիւնն արդէն կը հրատարակուի օրագրիս մէջ. (անոնց՝ ի ժամանակիս ամենէն գիտուն և մեզ ամենէն սիրելի և սքալի անձէ մի Բազմ. Խթ). որք և աւելի ճինովայի հետ յարաբերութիւն ունեցեր են քան վենետիոյ: Բայց մեր վերոյիշեալ Նաւաստոյն (Անտոնի) կտակադրած տարին, Կաֆայի Յովնանէս Հայ մ'ալ վենետիկ՝ Նօտարական գրուածով (6 յունիսի, 1395) իր Մարգարիտ անուամբ կինը իրեն փոխանորդ կամ զործակալ հաստատած է, որ կարող ըլլայ պահանջելու իր առնելիքները որ և է անձէ կամ տեղէ, և զիսաւորապէս զինավառութեան պաշտօնարանէն կամ Սենեկէն, (Camera Armamenti):

Յովհաննէս՝ Ս. Առաքելոց եկեղեցւոյն թաղը կը բնակէր, որոյ աւագերէցն է քահանայը և կղերիկոս մ'ալ իբրեւ վկայք ձեռք դրած են այս զրուածիս. որոյ իմաստէն գուշակութի որ Յովհաննէս պիտի մեկնէր ի վենետիկոյ, հաւանորէն վաճառականութեան համար, գուցէ և ինքն ալ նաւու վրայ իշխաւ. նովթին կամ պաշտօն մ'ունէր, որովհետեւ իրեն պարտական Սենեական կրնայ նշանակել և նաւեր զինելու և պատրաստելու տեղ: Յայտ է որ Յովհան սոսկ եկող գացող վաճառական մի չէր, այլ հաստատ բնակող ի վենետիկ, ինչպէս կ'ըսէ (*habitor Venetis*), որոյ յայտնագոյն եւս նշանն է (*ինչպէս նախագործալ Անտոնին ալ*) կին ունենալն. և գայն իրեն գործակալ կամ փոխանորդ գնելն ալ կը ցուցնէ՝ որ նա ալ ծանօթ էր ի քաղքին:

Այս երկու անձանց ալ (Յովհան և Անտոն) կանամբի ըլլալն՝ աւելի կարեւոր յայտնութիւն մի է, ժի. զարու մէջ ալ ի վենետիկ Հայ բնաւանեաց կամ առնու. սիրաց ըլլալուն, թէ և ասոնց կանայքը հայազգի չըլլան. սակայն եթէ անոնք ոչ՝ անհաւանական չէ որ կային և Հայ կանայք արամբիք կամ ամուրիք, ինչպէս Հայոց տան հոգացող և կտակող Մարիամն՝ նոյն դարուն կիսէն ալ առաջ, (Բագմ. Խթ. 104): Այս բանն ոչ միայն աւելի յայտնի կ'ըլլար, այլ թերեւս շատ ազգայինք մեր և անոնց զաւակքն և վիճակն կը յայտնուէին, եթէ այն ժամանակներ ալ սովորութիւն ըլլար եկեղեցական և քաղաքական դիւանաց մէջ՝ հանդիպած օրին նշանակել պատկերը, ծնունդները և մահերը, կամ թէ կորսուած չըլլային (եթէ եղած են) դիւանքն, ինչպէս որ հիմայ թէ քաղքին (վենետիկոյ) և թէ այլոց ամենայն թաղական եկեղեցեաց մէջ կան և կը պահուին այսպիսի դիւանք. վենետիկոյ մէջ ժ.Չ դարէն հին կամ առաջ չեն գտուիր. իսկ այս դարուս կիսէն ետեւ շատ եկեղեցեաց դիւանաց մէջ նշանակուած են, որչափ որ ինձ ծանօթ են, և առաւելապէս մահք Հայոց (իբրեւ 1200), Ծնունդք (800), Պատկը (250). այս ետքի վիճակէն գտած եմ նշանակուած 120 Հայ մարդ ընդ վենետոս կամ իտալացի կանայս, հարիւրի չափ Հայ կանայս ընդ իտալացի արանց, 40 զոյգ այր և կին Հայ ամուսինք: Առաջին պսակ և ծնունդ Հայու (գտածս) է Գ. Պարա. գային սկիզբը (1569), այլ անտարակոյս է անկէ՝ առաջ ալ ըլլալն:

Ժե. դարուն սկիզբները (1414). նոր և կարեւոր խնդիր մի, թերեւս և զէպք, եղած է Հայոց ընդ վենետոս յարակցութեան, թէ և յայտնի չէ խնդրոյն կամ պորոյն ինչպէս վճարիչն: Շատոնց վենետիկոյ քաղաքացի համարուած Հայ մի, որ կամ ազնուականութեամբ կամ հարստութեամբ նշանաւոր եղած պիտի ըլլայ, հաւանորէն Աբրահամ Անտերոն կոչուած (*Abraynus Anteron* զրուած Լատինարէն), որ երբեմն ի Տրապիզոն վենետոսց ամրոցի մէջ կը բնակէր (*in castro nostro Trapezunde*), տէրութեան Դերակուսին խնդիր կը մատուցանէ (յայտ է թէ զրով), բայց առաջուց ալ խօսած և հաւանութիւն առած ըլլալով, որ Հայոց գաղթականութիւն մի հաստատէ՝ այն ատեն վենետոսց իշխանութեան տակ եղած կրեւէ և Նեկրոպոնտ (*Էյրիպօզ*) կղզեաց մէջ. աւելի քան 80 Հայ բնաւանիք Տրապիզոնի և Սեբաստիոյ կողմերէն յօժար էին գալու այս ծովային կողմերը. և իրենց առաջնորդին (Անտերոնի) բերնով կը խնդրէին

պաշտպանութիւն, դիւրութիւն և մաքսի թեթեւութիւն : — Երեւակոյսն վերոյիշեալ տարւոյն փերբուարի 10 ին, ժողովեալ կը քննէ այս խնդիրը, և միաբան կամօք 93 ժողովելոց և քուէից՝ հաւանութեան վճիռ կու տայ, խոստանալով ամեն դիւրութիւն ինչ որ տէրութեան ուրիշ հպատակաց կը տրուէր : և կը հրամայէ գրեւ այն կղզեաց կառավարչին՝ որ ըստ այսմ վճռի գործէ և կատարէ : — Վճռոյն օրինակն կը պահուի Երեւակոսին Գիւանաց մէջ. խնդրոյին ազերսագիրն չկայ, կամ չէ յայտնուած : անյայտ է ինձ և կարեւորագոյն գիտելին : այսինքն թէ կատարուած է զաղթականութիւնն, այնքան Հայ ընտանիք, ոմանք Պոնտոսի եղբրքէն, ոմանք փոքր Ասիոյ գրեթէ կենդրոնէն՝ թողլով իրենց տուն տեղը՝ եկե՛ր են ինչուան Եգէական ծովածոցի մէջ բոյն դնելու, և նոր կերպով վաճառականութեան պարապելու : Չէ անհաւանելի : նկատելով որ այն ատեն Տրապիզոն առանձին Յունաց կայսրութեան մի մայրաքաղաք էր, ուր կը յաճախէին վենետիկ և Գենուացիք՝ հին դաշնակիցք Հայոց, Օսմանեանց տէրութիւնն ալ զեռ հաստատուած չէր փոքր Ասիոյ ամեն կողմերը, և զեռ ծովու վրայ զօրութիւն չունէր, ընդ հակառակն վենետաց նաւային զօրութեան ամենին յաջող ժամանակն էր : անոնց պաշտպանութեան ներքեւ կրնային Հայք ալ գալ, բնակել և վաճառակցել յիշեալ կղզեաց մէջ : Արդէն Հայք Կիլիկիոյ իրենց տէրութեան վերջի տարիները սկսեր էին սփռիլ ինչուան Յունաստանի և փոքր Ասիոյ ծովամիջոցի կղզիները, և ոմանք ի Մետիլինէ գալով կը խնդրէին Հռոգոսի ասպետներէն և կ'ընդունէին Եւով (Լանկոյ) կղզւոյ մէջ երկիր, եկեղեցի և մշակութեան եղներ, և այլն, յամի 1366 : Բայց արդեօք կը յիշէ՞ն, մանաւանդ յԵւփա (Նեկրոպոնտ) եկողք կամ գալ փափագողքն՝ իրենց 1500 տարի առաջ աշխարհակալ Արտաշէս Թագաւորին այն կողմերը նուաճելը, և իրեն ալ հոն մահուամբ կամ սպանմամբ նուաճուիլը : — Եթէ այս ցամաքի դրացի երկայնաձեւ կղզւոյ մէջ Հայոց բնակութիւնն այնքան ծանօթ չէ, անտարակոյս է Կրետէի մէջ, որոյ Ժ.Գ. Կարուն սկիզբէն (1204) վենետիկ տիրէին : Ապրոյեանց ազնուական ազգաբանութենէն որ բաւական ծանօթ է ազգայնոց, յայտնի է որ այն հռչակաւոր Ապրոյ Չէլէպին կարեւոր գործ մ'ունեցած է Օսմանեանց բանակին մէջ Կրետէի երկար պաշարման և առման ատեն՝ ի ձեռաց վենետաց (1669), և նոյն բանակին մէջ և դուրս գառող Հայերէն հարիւրաւորներ բնակեցուցեր է ի Գանստիա, եկեղեցի մ'ալ նորոգելով զարդարեր և Ս. Եպրայեա առուանել տուած է : Բայց անկէջ առաջ ալ այն տեղ Հայոց գտուելուն մեծ հաւաստիք է Գ. Արբանաճ կաթողիկոսին հոն ծնանիւն և այն ատեն երախայ ըլլալն : Այն պաշարման կամ պատերազմի տարիներուն մէջ էր, որ (յամի 1657), Խաչատուր կաթողիկոս Սոյ՝ ըստ ժամանակագրի միոյ. « Առաջի Յրանչեազոյ Մորոզինի՝ որ եղեւ դուքս վենետիկոյ, և Մարքէզին վիլլայ՝ պատարագեց ի Կրետէ հանդիսապէս, և պարգեւեց Մարքէզի վիլլային՝ զաջ Սրբոյն Նիկողայոսի ի Քառասնիցն » (մանկանց Սեբաստիոյ), և այլն :